# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Եվրոմեդ ՍՊԸ-ն ՏՄ-ՆԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/44 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Սմիթ+Նեֆյու | Սմիթ+Նեֆյու | Սմիթ+Նեֆյու | "Պոլար+քոքր տարբերակ Տոտալ կ/ա Էնսոպրոթեզ առանց ցեմենտ Ացետաբուլյար ներդիր (պոլիէթիլենային) Խաչաձև կապված գերբարձր մոլեկուլային քաշով պոլիէթիլենից պատրաստված ացետաբուլյար ներդիր՝ նախատեսված ցեմենտազուրկ բաժակների համար։ Ունի հուսալի մեխանիկական ֆիքսացիա և ներվիրահատական վերատեղադրման հնարավորություն։ Առկա է՝ ստանդարտ և անտիլյուքսացիոն (մինչև 20°) տարբերակներով, 28 մմ գլխիկի համար՝ 46, 48, 50, 52, 54, 56, 58, 60 մմ բաժակների չափերով, 32 մմ գլխիկի համար՝ 48, 50, 52, 54, 56, 58, 60, 62 մմ բաժակների չափերով։ Ացետաբուլյար պտուտակ (սպոնգիոզ) Տիտանային համաձուլվածքից պատրաստված սպոնգիոզ պտուտակ՝ ացետաբուլյար բաղադրիչի լրացուցիչ ֆիքսացիայի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | համար։ Ունի ինքնապտուտակվող ծայր և ամբողջական պարուրակ։ Չափերը՝ տրամագիծ՝ 6.5 մմ, երկարություններ՝ 15, 20, 25, 30, 35, 40, 45, 50, 60, 70 մմ։ Ացետաբուլյար բաժակ (ացետաբուլյար բաղադրիչ) Տիտանային համաձուլվածքից պատրաստված կիսագնդաձև բաժակ՝ առաջնային press-fit և երկրորդային օստեոինտեգրացիոն ֆիքսացիայով։ Համատեղելի է պոլիէթիլենային և կոշտ ներդիրների հետ։ Առկա է՝ անցքերով և առանց անցքերի տարբերակներով, արտաքին տրամագծերով՝ 46, 48, 50, 52, 54, 56, 58, 60, 62 մմ, լրացուցիչ ֆիքսացիայի հնարավորությամբ 6.5 մմ սպոնգիոզ պտուտակներով։ Ազդրային ոտիկ ոչ ցեմենտային : Նյութը՝ տիտանի համաձուլվածք / Ti6Al7Nb/ : Կրկնակի ծածկույթ. տիտանի պլազմային սփրեյ, հիդրոքսիապատիտ , իրենից ներկայացնում է ուղիղ ինքնակենտրոնացվող ոտիկ, որը ապահովում է առաջնային մեխանիկական կայունություն և հետագա օստեոինտեգրացիա։ Ունի ստանդարտ կոնուսային միացում (օր.՝ 12/14 կամ համարժեք)։ Չափերը » 119 և ≤ 167.5։ 5. Էնդոպրոթեզային գլխիկ (մետաղական) Բարձր ամրության մետաղական համաձուլվածքից (օր.՝ կոբալտ-քրոմ կամ համարժեք) պատրաստված գլխիկ՝ նախատեսված ազդրային ոտիկի հետ համատեղ օգտագործման համար։ Ունի ստանդարտ կոնուսային միացում (օր.՝ 12/14 կամ համարժեք)։ Տրամագծները՝ տարբեր (օր.՝ 28–36 մմ), օֆսեթները՝ տարբեր՝ ապահովելու հոդի կենսամեխանիկական վերականգնում OXINIUM® գլխիկ (օքսիդացված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ցիրկոնիում) Օքսիդացված ցիրկոնիումից (OXINIUM®) պատրաստված էնդոպրոթեզային գլխիկ՝ ցիրկոնիում-նիոբիում (Zr-Nb) համաձուլվածքի հիմքով: Մակերեսը ենթարկված է օքսիդացման տեխնոլոգիայի, որի արդյունքում ձևավորվում է կերամիկացված բարձր կարծրությամբ շերտ, որը հանդիսանում է նյութի անբաժանելի մասը և չի հանդիսանում առանձին ծածկույթ (coating): Տրամագծերը՝ 28 մմ և 32 մմ: Օֆսեթները՝ -3 մմ, 0 մմ, +4 մմ, +8 մմ, +12 մմ և +16 մմ: Համատեղելի է 12/14 կոնուսային միացում ունեցող ազդրային ոտիկների հետ:" |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Եվրոմեդ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՏՄ-ՆԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/44 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | |